

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ



Ի՛նչ տարի (27-ամեակ)
2020-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Բովանդակություն

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան Հօր	Էջ 3
Խօսք՝ Հովիւի եւ Հոգաբարձութեան	Էջ 4
Խօսք՝ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէնին	Էջ 5
Խօսք՝ Director of Christian Education, Eastern Prelacy of the Armenian Apostolic Church of America	Էջ 6
Խօսք՝ 40-րդ տարեշրջանի աւարտականներու	Էջ 8
Նոր Կնքանշան (Logo)	Էջ 9
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2019-20 տարեշրջանէն	Էջ 10
Առցանց ձեռային աշխատանքներ	Էջ 21
2020 Ս. Զատիկուայ Ճրագալոյցի պատշատեցումաձ ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն	Էջ 22
Մեր խօսքը	Էջ 23
www.sourphagop.org	Էջ 24
Հակիրճ տեղեկութիւններ 2019-20 տարեշրջանի մասին	Էջ 25
Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝ Ժամանակագրական շարքով	Էջ 27
Աշակերտական ներկայութեան տախտակներ	Էջ 28
2019-20 տարեշրջանի կազմը	Էջ 30

ՎԵՐԱՄՈՒՏ՝ (Առցանց)

13 Մեպտ. 2020

Ժամը 10:30

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան Հօր

**ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԵՒ
ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

**Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ 40-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Սրտի անհուն ուրախությամբ կողջուենք Մոնթրեալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցի հիմնադրության 40-ամեակը:

Ամենացորդ եւ նուիրեալ ուսուցիչներու ճիգերով պսակուած 40 շարունակական տարիներ, որոնց համար մենք մեր երախտագիտութիւնն ու գնահատանքը կը յայտենք: Միևնոյն ժամանակ կը գնահատենք նաեւ մեր ծնողներուն ցուցաբերած աջակցութիւնը, որով իրենց զաւակները կը վստահին Կիրակնօրեայ դպրոցին, հաւատալով անոր առաքելութեան, եւ այս առաքելութեան ընդմեջէն քրիստոնէական ճշմարիտ հաւատքի դաստիարակութեան եւ մեր ազգի արժէքներու ճանաչման:

Կիրակնօրեայ դպրոցը 40 Տարիներ իր ամբողջանուէր աշխատանքով հետամուտ եղած է նոր սերունդին քրիստոնէական դաստիարակութիւն ջամբելու նուիրական առաքելութեան: Առողջ դաստիարակութեան հիմքը բարոյական եւ հոգեւոր ժառանգութիւններուն հաւատարմի մնալու եւ առաւել եւս զանոնք զարգացնելու վրայ է խարսխուած:

Կիրակնօրեայ դպրոցը առաջնորդուեցաւ Տերունական այն խօսքով, որ կըսէ. «Մի՛ արգիլէր մանուկները որ ինծի մօտենան», եւ 40 տարիներ շարունակ հետամուտ եղաւ, մեր մանուկները բերելու սիրելի Տիրոջ մօտ, որպէսզի անոնք բարոյական սկզբունքներով մեծնան, աղօթքով սնանին ու հարազատ բարեկամ դառնան Մեծ Վարդապետին Յիսուս Քրիստոսի եւ մանաւանդ զգալի ճշմարտութիւնը Անոր մեղրահամ աստուածային խօսքերու քաղցրութեան: Չհեռացնէ նր մանուկները աւետարանական ճշմարտութենէն, բայց թո՛ւ տանք, որ մանուկները մնան այս ճամբուն մէջ եւ այնպէս մեծնան, որ իրենց մեծութեան մէջ իսկ մնան մանուկ առաքինութեամբ լեցուն ապրումներով եւ քրիստոնէայի վայել հոգեբանութեամբ:

Կիրակնօրեայ դպրոցը հաստատութիւն մըն է կիրակնօրեայ դրութեամբ, սակայն ամենօրեայ ապրումներու տրոփով բարախտու:

Յարգա՛նք բոլոր այն հիմնադիրներուն, որոնք քրիստոնէական դաստիարակութեան տեսիլքը ունեցած են եւ այդ տեսիլքը իրականացնելու համար յանձն առած են ամէն տեսակի զոհողութիւն եւ նուիրում:


Ուրախ եմ, որ Կիրակնօրեայ դպրոցի աշխատանքները, ինչպէս անցեալին, այսօր եւս կը շարունակուին նոյն թափով, ճիգով եւ անմնացորդ ու նուիրեալ ուսուցիչներու մէկտեղումով:

Միւրեկի՛ ծնողներ, մի՛ վարանիք ձեր զաւակները Կիրակնօրեայ դպրոց զրկելու. հաւատացէ՛ք անոր առաքելութեան եւ քաջ զիտցէք, որ ձեր զաւակները ճշմարիտ հաւատքով կը մեծնան եւ ճանաչումը կուենենան մեր ազգի սրբազան գանձերուն եւ արժէքներուն:

Եկէ՛ք, միասնաբար հետամուտ ըլլանք մեր նոր սերունդի առողջ դաստիարակութեան, կերտելու համար այսօրուան եւ վաղուան ճշմարիտ քրիստոնէան եւ վաւերական հայր:

Մնամք սիրոյ ջերմ ողջունիւ եւ օրհնութեամբ.

22 օկտեմբեր, 2019


 Աղօթարար՝

 ԲԱՐԳԵՆ ԱՐԹԵՂԻՍԿՈՂՈՍ
 Առաջնորդ



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,

եւ ծնողներ,

Ս. Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին,

Աստ,

Սիրելիներ,

1929-ին, Երջանկայիշատակ Սահակ Կաթողիկոս Խապայեան Կոնդակով պաշտօնապէս հռչակեց Հայ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու առաքելութիւնը: Այդ առնչութեամբ, անոր խորհրդատուն էր Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան, որ ետքը պիտի ըլլար Նորին Սրբութեան Աթոռակիցը: Շնորհիւ իր այս աջակցին, անոր վերջին տասնամեակը յոյսի լոյսերով պիտի մխիթարուէր: Եւ այն լոյսերէն մէկն ալ Կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան մեկնարկն էր: Աջակիցը իր վարդապետութեան օրերուն, ի տես Հայաստանի Առաջին Անկախութեան, գրած էր, թէ Հայ ազգին յարութիւնը՝ նման Քրիստոսի յարութեան պիտի ըլլայ սուրբ, փառաւոր, լուսափայլ, մեծապայծառ, հրաշալի, մեծ, յաղթող:

Այս տարին՝ Սեփրի դաշնադրին 100-ամեակն է. մեր հողահաւաքի տեսլականին միջազգային ձայնը: Եւ ահա մենք ալ իմաստալից զուգադիպութեամբ մը կը տօնենք 40-ամեակը մեր Կիրակնօրեային: Քրիստոնէական աւետարանչութեան հիմքին հաւատքն է Քրիստոսի Յարութեան: Ի շարս Հայ եկեղեցւոյ միւս Կիրակնօրեայ դպրոցներուն, նաեւ մեր դպրոցի կրթութեան հիմքին նոյն հաւատքն է: Ս. Յակոբի Կիրակնօրեան կրթարան մըն է Քրիստոսի Յարութեամբ կենսաւորուող, եւ է վասն Հայ ազգին յարութեան: Յարութիւն կ'առնեն այն հաւաքականութիւնները, ժողովուրդները եւ ազգերը, որոնք ներքին զօրութեան առաքելութիւններ ունին: Մեր Կիրակնօրեան, Հայ եկեղեցւոյ միւս Կիրակնօրեաններուն հետ, ներքին զօրութեան առաքելութիւն մըն է:

Այս հասկացողութեամբ եւ համոզումով կը խնդակցինք մեր կրթարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ ծնողներուն, նաեւ նախկին մշակներուն եւ ծնողներուն, ու կը մաղթենք, որ աճին աշակերտ-աշակերտուհիներուն շարքերը, եւ անոնց հետ միաժամանակ՝ մշակները շատնան:

Նորանոր 40-ամեակներ:

Բարեմաղթութեամբ՝

Հովսէ Ե՛ ՀՈՎԱԹԱՆՈՒԹԻԱՆ

28/05/2020

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ Անթիլիաս - Լիբանան		ARMENIAN CATHOLICOSATE OF CILICIA CHRISTIAN EDUCATION DEPARTMENT Antelias - Lebanon
--	---	--

Կարգաթիվ:
Ref N°: 217/18-19

Անթիլիաս,
Antelias, 24 Սեպտեմբեր 2019

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Մոնթրեալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին

Քաղաքակիրթ պատմութեան առաջին իսկ օրերէն, ազգերու եւ ընկերութիւններու դաստիարակութեան առաքելութիւնը առաջնահերթ եւ անյետաձգելի անհրաժեշտութիւն մը նկատուած է: Պատմական անժխտելի իրականութիւն է, որ զենքերով, բերդերով ու զօրքերով չէ որ ազգութիւն մը կը պաշտպանուի, այլ միայն առողջ դաստիարակութեամբ է որ կը գոյատեւէ: Եթէ մարդկային դաստիարակութիւնը կարեւոր է, ապա ուրեմն որքա՛ն աւելի կենսական է հոգեւոր դաստիարակութիւնը, երբ մարդկային աւանդական արժէքներն ու սկզբունքները այսօր գրոհանքի տակ են:

Այս առումով, Կիրակնօրեայ Դպրոցին դերակատարութիւնը անզուգական է մեր եկեղեցական ու հոգեւոր կեանքին մէջ: Առողջ Կիրակնօրեայ Դպրոց ունենալ կը նշանակէ առողջ սերունդ կազմաւորել եւ առողջ սերունդն է, որ գրաւականը պիտի դառնայ սփիւռքեան մեր համայնքներու գոյատեւման: Ո՛ր ունինք ամօր Կիրակնօրեայ, հո՛ն ունինք նաեւ յոյս՝ ապագայի նկատմամբ:

Ուստի, մեծապէս ողջունելի առիթ է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին համար, Մոնթրեալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին 40-ամեակի տօնակատարութիւնը: Յառաջիկայ սերունդներուն մէջ Քրիստոսի պատկերին ամրապնդման այս ազնուագոյն առաքելութիւնը վստահուած է ձեզի, եւ հետեւաբար, ամենաբարին՝ կը մաղթենք համայնքի քահանայից դասուն, հոգաբարձութեան եւ ի մասնաւորի՝ Կիրակնօրեայ Դպրոցին ուսուցչաց կազմին: Թող Աստուծոյ օրհնութիւնը առատապէս հոսի բոլոր անոնց վրայ, որոնք իրենց մասնակցութիւնը բերին ու կը շարունակեն բերել այս դպրոցին հաստատումին եւ աճման:

Հազար պատիւ՝ մեր նախանձախնդիր ծնողներուն եւ բի՛ւր յարգանք մեր գիտակից դաստիարակներուն:

Ջերմ սիրով ու աղօթքով՝

Ջարեհ Վրդ. Սարգիսեան



Վարիչ՝ Քրիստոնէական Դաստիարակութեան
Բաժանմունքի եւ

Տեսուչ՝ Կիրակնօրեայ Վարժարաններու





Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ա Ր Ա Ն

ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
EASTERN PRELACY - 138 East 39th Street, New York, NY 10016
Tel: (212) 689-7810, FAX (212) 689-7168, e-mail: email@armenianprelacy.org

October 3, 2019

Mr. Toros Babikian, Director
Sourp Hagop Sunday School
3401 Olivar-Asselin
Montreal, Quebec, H4J 1L5

Dear Toros,

On the occasion of the 40th anniversary of the establishment of the Sunday School at Sourp Hagop Armenian Apostolic Church of Montreal, Canada, I would like to congratulate the community at large, and especially you, and the Sunday School community for their dedicated ministry and contribution in the Christian formation of the children and the youth.

On a personal note, I have had the honor of working with you, Toros, over the years, when Canada was under the jurisdiction of the Eastern Prelacy of the Armenian Apostolic Church of America. You have been serving faithfully for almost a quarter of a century. *Vartskerneet gadar!*

Indeed, the Sunday School has a pivotal role in the Christian and the spiritual formation of all those who have been baptized in the Armenian Apostolic Church. This indispensable role of the Sunday School *supplements*, does not replace, the other two essential components of a healthy formation of a Christian character—which are the **local Church**, the believer at worship and in mission, and the **family**, a place where the child learns to live according to the pattern of Christ. All three components must work in synergy.

The Sunday School is the place where a person gradually learns the basics of our Christian faith to be a cognizant member of the Armenian Apostolic Church and a follower of Jesus Christ. Much entails in this endeavor. Thus, by the time someone graduates from our Sunday School, he/she should:


- Be acquainted with the overarching biblical narrative, from Genesis to Revelation;
- Be developing the discipline of feasting on the Word of God;
- Be familiar with the rites of the Armenian Church, especially the Eucharist (*Soorp Badarak*), and be actively participating in the celebration of the Eucharist (*Soorp Badarak*) on a regular basis;
- Understand the proclamation of our faith as encapsulated in our creeds;
- Know some basic Armenian Church prayers and pray on a regular basis;
- And finally, the graduate of the Sunday School program must live a distinctive Christian life style.

For all these things, we give thanks and glory to God for your Sunday School ministry and celebrate with you the joy of the 40th anniversary of the establishment of your Sunday School. May the Lord strengthen you all to continue doing the work that the Church has entrusted to you. And always

bearing in mind, the words of the Apostle Paul, “be steadfast, immovable, always excelling in the work of the Lord, because you know that in the Lord your labor is not in vain” (1 Corinthians 15:58).

Once again, congratulations and may God bless you all, and bless the Sunday School ministry at Sourp Hagop Armenian Apostolic church.

Faithfully in Christ,



Deacon Shant Kazanjian

Director of Christian Education

Eastern Prelacy of the Armenian Apostolic Church of America

40-րդ Տարեշրջանի աւարտական՝ Հրակ Պանքեանի խօսքը



Անունս Հրակ Պանքեան է եւ փոքր տարիքէս յաճախած եմ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ դպրոցը՝ անշուշտ, սկիզբը իմ որոշումս չէր արձանագրուիլ, այլ ծնողքիս:

Տարիներու ընթացքին, սկսայ երթալէն աւելի սիրել Կիրակնօրեայ դպրոցը, մանաւանդ երբ երկրորդական դասարաններուն հասայ որովհետեւ նիւթերը սկսան աւելի խորունկ ըլլալ եւ այն ատեն էր որ սկսայ աւելի գիտակցօրէն աշակերտել այս դպրոցը: Նաեւ, այս տարիներուն ընթացքին էր որ կապերս ուսուցիչներուն հետ սկսան զօրանալ, ինչ որ շատ մեծ դրական ազդեցութիւն ունեցաւ վրաս: Մինչեւ այսօր չեմ մոռնար այն հաճելի մթնոլորտը որ կը ստեղծուէր երբ Jeopardy խաղայինք: Ամբողջ դասարանը խանդավառուած կ'ըլլար եւ խաղի ձեւով շատ գիտելիքներ կը սորվէինք:

Կիրակնօրեայ դպրոց յաճախելով է որ եկեղեցւոյ հետ կապս սկսաւ զօրանալ: Երբ Կիրակնօրեան փակ է, ինչպէս ամառուայ ընթացքին, դպրաց դասին կը միանամ Կիրակի օրով որպէսզի հետերնին երգեմ Պատարագը: Նաեւ, այս վերջին մի քանի ամիսներուն ընթացքին, երեք ուսուցիչներու հետ (Պարոն Առէնը, Պարոն Սեւակը եւ Պարոն Միւրը), սկսանք դասընթացքներու հետեւիլ որպէսզի Դպիր/Կիսասարկաւագ ձեռնադրուինք:

Այս դպրոցական տարեշրջանը երբ գրեթէ աւարտած է եւ Սեպտեմբեր 2020-ին յոյսով եմ որ Ceger պիտի երթամ եւ օտար շրջանակի մը մէջ պիտի մտնեմ, կրնամ ըսել որ Կիրակնօրեայ դպրոցը ինծի լաւ պատրաստած է: Սփիւռքի մէջ, շատեր կը ձուլուին երբ օտար շրջանակի մէջ կը մտնեն եւ հայ համայնքը կը սկսին մոռնալ: Մէկ խօսքով, իրենց համայնքային կեանքը մէկ կողմ կը դնեն: Այս իրականութիւնը նկատի ունենալով, Կիրակնօրեայ դպրոցը ինծի շատ լաւ պատրաստած է որովհետեւ չեմ կրնար նոյնիսկ երեւակայել ինքզինքս անջատել համայնքային այս կեանքէն:

Կիրակնօրեայ դպրոցը շատ գիտելիքներ փոխանցած է ինծի որ առօրեայ դպրոցի մը մէջ կարելի չէ սորվիլ: Այս բոլոր գիտելիքները ինծի այսօր կերտած են իբրեւ անձ եւ թոյլ տուած են որ իրապէս ճանչնամ իմ ինքնութիւնս ու գիտնամ թէ ի՞նչ կը նշանակէ «Հայ Քրիստոնէայ» ըլլալ: Վերջին քանի մը տարիներուն ընթացքին, անհամբեր կը սպասէի ծառայելու իմ Կիրակնօրեայ Դպրոցիս իբրեւ ուսուցչական կազմի անդամ, որպէսզի ես ալ կարենամ սորվածներս փոխանցել եկող սերունդներուն:

Վերջի վերջոյ, իրենք են մեր ապագան եւ կ'ուզեմ իմ կարելիս ընել մեր ազգ-համայնքը յառաջ տանելու նպատակով:

40-րդ Տարեշրջանի աւարտական Ալէքս Տէմիրճեանի խօսքը



Անունս Ալէքս Տէմիրճեան է: Նախակրթարանէն ի վեր կը յաճախեմ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը եւ, ահաւասիկ, տասներորդ տարիս ամբողջացնելէ ետք, հպարտութեամբ կ'աւարտեմ երկրորդական ուսումս:

Ամենօրեայ Դպրոցին կողքին, Կիրակնօրեայ Դպրոցը զարգացուց ընդհանուր գիտելիքներս: Երբ ամենօրեայ դպրոցին Հայերէն նիւթերու ժամերը կը պակսէին, Կիրակնօրեայ դպրոցը ինծի համար աւելի կարեւոր դարձաւ:

Կիրակի օրուայ պահերս, որոշ ձեռով, աւելցուցին եւ ամբողջացուցին իմ Կրօնի եւ Հայոց Պատմութեան դասերու գիտութիւնս:

Կիրակնօրեայ Դպրոցը ինծի տուաւ ընկերներու փոքր խումբ մը: Պահերէս ներս զարգացուցի զօրաւոր կապեր ուրիշ հայ աշակերտներու հետ, որոնք նոյն հետաքրքրութիւններս ունէին Քրիստոնէութեան նկատմամբ: Դպրոցէն ներս սորվեցայ Աստուածաշունչը մեկնաբանել, սաղմոսներ գնահատել եւ շարականներ երգել: Սակայն, ամենէն կարեւոր նիւթը ինծի համար եղաւ քրիստոնէական արժէքներու դասերը, որոնք ներկայ եւ ապագայ կեանքիս դէկը կը նկատեմ:

Բոլոր տարիներուն, ուսուցչական լման կազմին մասնակցութիւնն ու ջանքերը օգնեցին տաշելու նկարագիրս եւ եւ զօրացնելու հաւատքս: Հետեւաբար, իրենց ոգեւորիչ գործերը կը մղեն ինծի որ ես ալ իբր օգնական եւ ապագայ ուսուցիչ շարունակեմ աշխատակցութիւնս Կիրակնօրեայ Դպրոցին հետ:

Յոյսով եմ որ իմ ճիգերս, իրենց հերթին, կը ներշնչեն ապագայ սերունդներու աշակերտները, եւ կ'օգնեն որ աւելի մանուկներ քաջալերուին յաճախելու Կիրակնօրեայ դպրոցը համընթացօրէն ամենօրեայ դպրոցին:

Ալ աւելի, իմ շրջանը աւարտելս կը զուգադիպի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակին հետ: Այս առիթով, կը շնորհաւորեմ եւ յաջողութիւն կը մաղթեմ Կիրակնօրեայ Դպրոցի մեծ ընտանիքին, այս թանկագին հաստատութեան որ իր տեղը կը գրաւէ Մոնթրէալի հայ համայնքին մէջ եւ կը հարստացնէ զայն:

Նոր Կնքանշան (Logo)

Մեր 40-ամեակին առիթով այս տարեշրջանին մեր ուսուցիչներին Բասգալ Տէմիրճեանը պատրաստեց մի քանի կնքանշաններ, եւ մի քանի փոփոխութիւններէ ետք հետեւեալները որդեգրուեցան: Շնորհակալութիւն Բասգալ եւ վարձքդ կատար:



ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2019-20 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



Բողբոջ-Կոկոն-Ծաղիկ Դասարան





Նախակրթարան Ա. և Բ. դասարաններ



Նախակրթարան Գ. և Դ. դասարաններ



Նախակրթարան Ե. և Զ. դասարաններ



2019 - 20 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ



2019-20 տարեշրջանի Ծրագրային Ա. Ժողով



2019-20 տարեշրջանի Տարեփակի Ժողով

Երիտասարդներու Խտացեալ Դասընթացք

Օգոստոս 5-18, 2019-ի միջեւ, Անթիլիասի Մայրավանքէն ներս երկրորդ տարին ըլլալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին նախաձեռնութեամբ ու անմիջական հսկողութեամբ տեղի ունեցաւ երիտասարդներու խտացեալ դասընթացք: Հիւսիսային Ամերիկայի մեր թեմերուն յատուկ յիշեալ դասընթացքին մասնակցեցան 22 երիտասարդներ ընտրուած թեմերուն կողմէ: Դասընթացքը տեղի ունեցաւ անգլերէն լեզուով եւ քննարկեց հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին, ինչպէս նաեւ ներկայ ժամանակներու առնչուած այժմեական հարցեր: Մեր ուսուցչուհիներէն Օրդ. Թամար Գիզիրեան մասնակցեցաւ սոյն դասընթացքին:



ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ-ԱՇԽԱՏԱՆՈՑ



Շաբաթ, 10 Օգոստոս 2019-ին, Քինկսթըրնի մէջ, մեր Կիրակնօրեայ Դպրոցէն Հրակ Պանքեան, Միեր Պանքեան, Առէն Պապիկեան, Սեւակ Պապիկեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան եւ Շողիկ Թեհինեան մասնակցեցան Գանատայի Հայոց Թեմի կողմէ հովանաւորուած եւ Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին կողմէ կազմակերպուած Կիրակնօրեայ

Դպրոցներու միօրեայ սեմինար-աշխատանոցին որ ունէր հետեւեալ յայտագիրը.

Ս. Գրային խորհրդածութիւն (Հայր Գեղարդ)

- «Աշակերտք Քրիստոսի» շարականի խմբային երգեցողութիւն

- Օրուան դասախօսի ներկայացում.- Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան

Ա. Պահ՝ «Ուղղեցոյցի ներկայացում»

- Ինչո՞վ տարբեր է եւ ինչո՞ւ համար դիւրին չէ այսօրուան հայ մանուկին եւ պատանին կրօնի ուսուցում եւ դաստիարակութիւն ջամբելը: Ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւէ հայ մանուկը կամ պատանին:

- Այսօրուան Կիրակնօրեայ վարժարանի հայ ուսուցիչին դիմագրաւած մարտահրաւերները եւ Ուղեցոյց մը ունենալու անհրաժեշտութիւնը:

- Ուղեցոյցի ներկայացում.- Ե՞րբ պատրաստուած է եւ ո՞ր թեմէն՝ եկեղեցիներէն ներս կը գործածուի, բովանդակութիւն, գործածութեան մեթոտ, դասապահերու օրինակներ տեսնել:

Բ. Պահ՝ Աշխատանոց/Workshop

- Սրբոց Թարգմանչաց տօնը.- դասարանային-տարիքային բաժանումներով, դաս/activity մը պատրաստել, որ պիտի գործածուի Թարգմանչաց տօնին, իւրաքանչիւր եկեղեցւոյ Կիրակնօրեայէն ներս:

- Համագումարի արժեւորում

- Առաջնորդ Սրբազան Հօր խօսք եւ փակում՝ «Պահպանիչով»

«Աստուածաշունչի ներկայացում» Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակին առիթով



Կիրակնօրեայ դպրոցի 40-ամեակին առիթով, Սուրբ Յակոբի տոնին օրը՝ Շաբաթ 14 Դեկտեմբեր 2019 երեկոյեան ժամը 6:00-ին, յետ արարողութեան, տեղի ունեցաւ «Աստուածաշունչի ներկայացում» Դպրոցի տնօրէն Բրշ. Թորոս Սրկ. Պապիկեանի կողմէ:

Ներկայացումը կը բաղկանար 54 նկարազարդ PowerPoint slide-ներէ որոնց ընդմէջէն մանրամասնօրէն ներկայացուեցաւ Աստուածաշունչի պատմականը, պատգամը, ինչպէս նաեւ Հին եւ Նոր կտակարաններու, եւ երկրորդական գիրքերու բովանդակութիւնը: Ներկայացումէն ետք իւրաքանչիւր մասնակիցի տրուեցաւ Աստուածաշունչ մը նուիրատուութեամբ բարերար Մանուկ Չուխաճեանի:

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2019-20 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ











2019 - 20 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՌՑԱՆՑ Ձեռային Աշխատանքներ




Պատրաստեց՝ Մհեր Պանքեան



Պատրաստեց՝ Թամար Գիզիրեան

2020 Ս. Զատկույայ Ճրագալոյցի Պատշառեցում ընթերցումներ
Մատուցմամբ մեր Աշակերտներուն



Եկեղեցւոյ Հովիւին եւ Հոգաբարձութեան որոշումով,
Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակին առիթով
Ապրիլ 11, 2020-ին Սուրբ Զատկույայ Խթման
Մարգարեական ընթերցումները պիտի կատարուին
մեր աշակերտներուն կողմէ: Սակայն հակառակ
Գործնաժառանգ մեր աշակերտները կատարեցին այդ
ընթերցումները Վիտէոյով՝ պատրաստուած Բասգալ
Տեմիրճեանին կողմէ:

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ հակառակ անոր որ Մարտ 8, 2020-ին այս տարեշրջանին համար վերջին անգամ ըլլալով կրցանք հաւաքուիլ մեր դպրոցէն ներս, փորձեցինք մեր գործունէութիւնը առցանց շարունակել: Այս տարի նաեւ 27-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին անցեալ օրը՝ Դեկտեմբեր 2019-ին մեր կայքէջին www.sourphagop.org-ին 19-րդ տարեդարձն էր:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փայլի հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 90 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարւուան ընթացքին, բաղդատած նախորդ տարւուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 48-էն 59-ի բարձրացաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 32-էն 42-ի: Այս տարւուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ ունինք մեծագոյն թիւով (12) Երկրորդական Ա. դասարանի աւարտականներ, որոնք ուռճացուցին մեր երկրորդական աշակերտներու թիւը:

Աստուծոյ կամքով՝ մեր 41-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին որ այս տարի Սեպտեմբեր 13, 2020-ին է:

Ժամանակը ցոյց պիտի տայ եթէ պիտի կարենանք մեր գործունէութիւնը շարունակել ըստ սովորականին, թէ պէտք է առցանց տարփերակներ գտնենք:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 20-րդ տարին մտաւ 2019-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժինն մէջ կը գտնուէք:

- Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սր. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները: Աւելցուցինք նաեւ երգերու եւ շարականներու բաժին մը ուր կը գտնուէինք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ ուսուցանուած երգերը:

Անշուշտ մեր կայքէջին վրայ նաեւ գտնուէինք «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը:

Ինչպէս կը տեսնէք, մեր կայքէջին ենթաբաժանումներն են.

Մեր մասին, Լրահոս, Սուրբեր, Տօներ, Գիրքեր, Ժամանակացոյց, Մաշտոցի Արձագանգ, Կապեր, Events, Survey, Blog, Armenian Font, Gallery:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոց

2019-20 թ. տարեշրջան (40-րդ)
Յիսուս ըսաւ՝ «Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛
ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը»: Մարկոսի Աւետարան 10.14

Կիրակնօրեայ Դպրոցին Առօրեան (4'
տեսերիզ)

Armenian Church ...

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի արձագանգ
WWW.SOURPHAGOP.ORG (20-րդ տարին)

Սուրբ Յակոբի Դպրոցի 40-րդ տարեշրջանի
Մասին և այլ լուրեր

Մեր փառքը՝
Երկու օրացում:
Սուրբ Հովնաթան Կոստե
Սուրբ Եղեմ
Սուրբ Տովմ
Եւ Սուրբ Գր. Կրիստոսի
Լուսինքն
Մեր օրացումները հասնելու
Մեր օրացումները հասնելու
Մեր օրացումները հասնելու

twitter

f

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2019-20 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

40-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2019-20 տարեշրջանը 40-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 40-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի (անշուշտ հաշուի առնելով թէ Մարտ 8, 2020-էն ետք չկրցանք հաւաքուիլ ամէն Կիրակի): Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի 3-րդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտեզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 4 դասարաններ, որոնք գործեցին 6 խմբաւորութիւնով:

27-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2019-20 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 27-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաբերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ

http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

20-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաբերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

ԱՇԽԱՏԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2019-20 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 57 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 42՝ բաժնուած 6 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2019-20 տարեշրջանին ունեցանք 6 տարբեր բաժանութիւններ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ
Նախակրթարան Ա. եւ Բ.

Դաստիարակ

Շողիկ Թեհինեան,
Թալին Բարսեղեան

Նախակրթարան Գ. եւ Դ.
Նախակրթարան Ե. եւ Զ.
Երկր. Ա.

Երկրորդական Բ. Գ. եւ Ե.

Երգերու եւ շարականներու ուսուցում

Երկրորդականի մասնաւոր Ծրագիր
«Մաշտոցի Արձագանգ»
Տնօրէն եւ Կայքէջի պատասխանատու

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արժարժուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2019-20 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմուածքներու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին


Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

		Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց 2019-20 տարեշրջան							
Սկիզբ	Վերջ	Բողոք-Վոկալ-Մաղիկ	Նախ. Ա. Եւ Բ.	Նախ. Գ. եւ Դ.	Նախ. Ե. եւ Զ.	Երկր. Ա.	Երկր. Բ. Գ., եւ Ե.		
10:30	11:00	Հ Ա Ի Ա Ք							
11:00	11:08	Հայր Մեր, Մաղթանքներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգ							
11:10	11:45	Լսարանային	Լսարանային	Երգ		Լսարանային	Լսարանային		
11:47	12:22	Երգ		Լսարանային	Լսարանային	Դաս.	Դաս.		
12:25	13:00	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Երգ/Դաս	Երգ/Դաս		
13:02	13:05	Պահապան ամենայնի Քրիստոս - Մասն եւ բաժին եղիցի սուրբ պատարագիս							


ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

15 Սեպտեմբեր 2019	Տարեկիզբ եւ վերամուտ
22 Սեպտեմբեր 2019	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ
5 Հոկտեմբեր 2019	40-ամեակի հանդիսութիւն՝ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ խաչաձեւումի պատճառով
13 Հոկտեմբեր 2019	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
22 Դեկտեմբեր 2019	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով
23 Փետրուար 2020	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
8 Մարտ 2020	Դպրոցի 24-րդ եւ վերջին հաւաքոյթը Դպրոցէն ներս:
21 Մարտ 2020	40-ամեակի հանդիսութիւն՝ ՅԵՏԱԶԳՈՒԱԾ Գորոնաժահրի պատճառով
11 Ապրիլ 2020	Վիտէոյով Մարգարէական Ընթերցումներ
7 Յունիս 2020	Ամաւերջի Հանդէս, առցանց https://www.facebook.com/sourphagop.org/videos/232028741441892

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2019-20 տարեշրջանի իրաքանչիւր դասարանի արձանագրություն եւ միջին ներկայություն



2019-20 տարեշրջանի իրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Ի.Է. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի

2019-20 տարեշրջանի կազմը

Սդեֆան Տեմիրճեան

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Բաագալ Տեմիրճեան

Շողիկ Թեհինեան

Առէն Պապիկեան

Թամար Գիգիրեան

Բուբինա Գարամինասեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թալին Բարսեղեան

Թորոս Պապիկեան